ԿԱՐԾԻՔ

Երևանի պետական համալսարանի հայցորդ Նարեկ Վահագնի Հարությունյանի «Քրեական պատասխանատվությունը անօրինական միգրացիայի կազմակերպման համար. տեսական և գործնական հիմնախնդիրները» ատենախոսության

Բնակչության միգրացիոն գործընթացները կարևոր դերակատարություն ունեն յուրաքանչյուր պետության սոցիալ-տնտեսական առաջընթացի, ժողովրդագրական պատկերի ձևավորման, պետության զարգացման քաղաքականության ձևավորման առումով: Եթե վերահսկելի միգրացիա ծառայում է ընդունող պետության բարօրությանը, ապա դրա ապօրինի դրսևորումները սպառնալիք են ներկայացնում այդ պետության անվտանգության, կայունության համար, նպաստավոր միջավայր ձևավորում հանցավորության, անդրսահմանային և միջազգային հանցավոր կազմակերպությունների ձևավորման և տարածման համար: Խնդիրն ՀՀ-ում առավել արդիականություն է ստացել ներկա ժամանակաշրջանում, երբ գլոբալ բնույթ կրող զինված բախումների, էկոլոգիական աղետների, սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացման օայմաններում նկատվում է միգրացիոն գործընթացների ակտիվացում: Առավել վտանգավոր են իրավիճակները, երբ գործ ենք ունենում կազմակերպված անօրինական միգրացիայի հետ:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 470-ը պատասխանատվություն է սահմանում անօրինական միգրացիա կազմակերպելու համար, այնուհանդերձ սոսկ այդ նորմի առկայությունը բավարար չէ անօրինական միգրացիա երևույթի դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար: Ավելին, նշված նորմի վերլուծությունը և ՀՀ քրեական օրենսգրքի այլ դրույթների հետ համադրումը, թույլ է տալիս բախվել մի շարք իրարամերժ մոտեցումների, լրացուցիչ պարզաբանման կարիք ունեցող հարցերի հետ, ինչն էլ վկայում է ընտրված թեմայի կարևորության և արդիականության մասին: Մասնավորապես, խնդրահարույց է այն, թե որքանով է հիմնավորված քրեական պատասխանատվության սահմանումը անօրինական միգրացիա կազմակերպելու համար սոսկ շահադիտական նպատակների պարագայում, որքանով է օրենսդիրը սպառիչ ներկայացրել այս հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակները և այլն:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, յոթ ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության և նորմատիվ իրավական ակտերի ցանկից: Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի հրատապությունը, ներկայացվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, հետազոտության թեմայի մշակվածության աստիճանն ու տեսական, իրավական, փորձառնական, մեթոդաբանական հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը::

Առաջին գլխում՝ Անօրինական միգրացիայի ընդհանուր բնութագիրը, հեղինակը վերլուծության է ենթարկում բնակչության միգրացիայի տեսակների, դրսևորման ձևերի հիմնախնդիրը, ներկայացնում անօրինական միգրացիայի դեմ պայքարի ինչպես միջազգային իրավական, այնպես էլ ներպետական կարգավորումները: Հեղինակը ներկայացրել է անօրինական միգրացիայի տարբեր դրսևորումները, քննարկել դրա պատճառները, վերլուծության ենթարկել այդ ոլորտի ինչպես միջազգային իրավական կանոնակարգումները, այնպես էլ Եվրոպական և ԱՊՀ մի շարք երկրների քրեական օրենսգրքերում տեղ գտած կարգավորումները:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ Անօրինական միգրացիայի կազմակերպման համար պատասխանատվությունն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի, նվիրված է ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած այդ հանցակազմի հատկանիշների, դրա ծանրացնող հանգամանքներով տեսակների, հարակից հանցագործություններից սահմանազատման չափանիշների վերլուծությանը: Հեղինակը իր աշխատանքի շրջանակներում անդրադառնում է անօրինական միգրացիայի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներին՝ մանրամասն քննարկելով շարժառիթներն ու նպատակները, հանցանքի օբյեկտիվ կողմի դրսևորումները, հանցանքի ծանրացնող հանգամանքներով տեսակներին, առաջարկություններ ներկայացրել ՀՀ քրեական օրենսդրության կատարելագործման ուղղությամբ, մասնավորապես՝ առաջարկել որպես ծանրացնող հանգամանքով տեսակ նախատեսելը հանցանքի կատարումը ոչ թե պարզապես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, այլև՝ առանց նախնական համաձայնության խմբի, հանցավոր կազմակերպության կողմից:

Պետք է նշել, որ հեղինակին հաջողվել է հետաքրքիր աշխատանք ներկայացնել: Ներկայացված աշխատանքի շրջանակներում հեղինակը կատարել է մի շարք առաջարկություններ ուղղված ՀՀ օրենսդրության բարելավմանը: Հեղինակը կիրառել է ՀՀ դատական պրակտիկայի, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության նյութերը, ինչը արժեքավորում է կատարված աշխատանքը:

Աշխատանքի վերաբերյալ առկա են նաև որոշ դիտողություններ, մասնավորապես՝

1. Պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթում հեղինակը իրավացիորեն նշում է, որ անօրինական միգրացիայի կազմակերպողը չպետք է նույնացվի հանցակցի տեսակ հանդիսացող կազմակերպչի հետ: Ավելին՝ անօրինական միգրացիա կազմակերպողին վերագրվող գործառույթների վերլուծությունը վկայում է, որ, հեղինակի կարծիքով, խոսքն առավելապես վերաբերում է օժանդակման գործառույթներ իրականացնողին, մասնավորապես՝ երկիր մուտք գործելուն ցանկացած եղանակով նպաստելուն, պայմաններ ստեղծելուն: Ցանկալի կլիներ լսել հեղինակի պարզաբանումները՝ թե առավել հիմնավորված չէր լինի այդ դեպքում փոխել նար հանցակազմի վերտառությունը՝ ներառելով ոչ միայն անօրինական միգրացիա կազմակերպելը, այլև դրան նպաստելը:

2. Պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթում հեղինակը նշում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 470-ում տեղ գտած հանցակազմի ձևակերպման ժամանակ շահադիտական նպատակի առկայության պարտադիր պահանջն անհարկի նեղացնում է հանցակազմի շրջանակները, քանի որ հնարավոր են դեպքեր, որ անօրինական միգրացիա կազմակերպող անձը գործի այլ՝ նյութական օգուտ ակնկալելու հետ կապ չունեցող շարժառիթներով: Կիսելով հեղինակի մոտեցումն այդ առումով, կարծում եմ, լրացուցիչ հիմնավորման կարիք ունի նրա կողմից առաջարկվող լուծումը. հեղինակն առաջարկում է «շահադիտական նպատակ» արտահայտության փոխարեն օգտագործել «շահադիտական, անձնական այլ շահագրգռվածություն կամ խմբային շահ» արտահայտությունը: Արդյո՞ք նման ձևակերպումը ևս անհարկի չի սահմանափակում հանցակազմը, օրինակ՝ եթե անձը ապօրինի միգրացիա է կազմակերպել ելնելով հայրենասիրական մղումներից, կարելի է արդյո՞ք դա դիտարկել որպես անձնական այլ շահագրգռվածություն կամ խմբային շահ:

Այնուհանդերձ, ներկայացված դիտարկումները չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժանիքները:

Նարեկ Վահագնի Հարությունյանի «Քրեական պատասխանատվությունը անօրինական միգրացիայի կազմակերպման համար. տեսական և գործնական հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է ԺԲ.00.05 Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Գրախոսող

ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ի.գ.դ. Ա.Մարգարյան

Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Ա.Մարգարյանի ստորագրությունը հաստատում եմ:

Դեկանի տեղակալ Ա. Պետրոսյան